

ՊԵՏՐՈՍ ԱԼԱԿԱՅՏՈՅԵԱՆ

ՀԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Ժամադրութիւնս ճշգրտած էր ժամը 4-ին. կիրակի. 25 Օգոստոս. կժու, ցրտաշունչ մրրիկ մը վանած էր առտուընէ ի վեր նուազագոյն յոյսն իսկ ջերմութեան ու արեւի. նմանօրինակ եղանակ հոգիս կը խռովէ. մանաւանդ երբ ան կը պատահի ամառ կոչուած եղանակին: Մերուկը անծանօթ էր ինծի. ութսուննոց մը ըլլալու էր. կը պատմըէր թէ գիտէր շատ բան ու երգեր ունէր գործիքիս յանձնելիք. արձանագրած երիզներուս թիւը կը մօտենար քառասունի: Այսօր սակայն թերահաւատ էի. ցրտաբարոյ եւ անտեղի կիրակի մը. իբրեւ թէ ամառ էր. ճամբան երկար պիտի թուէր — մեթրօ, հանրաշարժ, սպասելներ, քալելներ, յոգնիլներ, ցուրտ օդ, թերեւս անձրեւ. մարդու պիտի չհանդիպէի ապահովաբար, զուցէ մէկ-երկու սեւամորթներու կամ արաբներու. կօշիկս դեռ նորոգուած չէր, կրնայի պաղ առնել ոտքէս, պէտք էր ամէն գնով զգուշանայի. իրապէս չէի ուզեր տեղէս շարժիլ. երանի թէ առաջուց ճանչցած ըլլայի պապիկը, դոնէ հանդիպած մէկ անգամ. պիտի համարձակէի հեռաձայնել եւ ըսել — «սիրելի Խաչիկեան, թողունք սա գործը ուրիշ օրուայ» — եւ որեւէ պատրուակ ընդունելի պիտի ըլլար. սկնյայտ կերպով խռոված էի՝ քիչ մը առանց պատճառի. ի՞նչ կ'ուզէր սիրտս՝ յստակ չէր. թերեւս քիչիկ մը երիտասարդութիւն. այո՛, վստահաբար — երիտասարդութիւն. ինչը՞ խմբուած չենք հոս, այսօր, միաժամանակ, բոլորս, Արամը, Վիգէնը, Յարութը, Արմէնը եւ իրենց հայուհի տիկինները՝ մէկը միւսէն աւելի հեզահամբոյր ու շնորհալի: Ինը ամիսը պիտի բոլորէր — ծեր, ծերանոց, հանգստեան տուն, բռնագաղթ, զուլում, ջարդ, անէծք, երգարան, խառնարան. կարիքը կը զգայի փոփոխութեան, մարմինս կ'ըմբոստանար, բնամղումներս մշուշոտած էին, ղնչակալուած. կ'երագէի գործել առողջ ու աշխոյժ շարժումներու հետ. ժամանակին, Պէյրութ, կիրակի օրերը Օգոստոս ամսուն, թաւի կը խաղայի հօրս հետ, գիւղը, մշտադալար արեւուն տակ. քաջ գիտէի որ սիրտս պիտի նեղուէր քանի որ պիտի պարտուէի, բայց ի՞նչ երանութիւն էր... յանկարծ փափաքեցայ թաւի խաղալ Մարկին հետ, երազներու մասին խօսիլ Արմէնին հետ, քրտական պար բռնել Անիին հետ. ժամը 4-ին քառորդ կար. պարտուած ու պարպուած ինքզինքէս, առի ընկալուչը անզգալաբար ու... «Պըն. Խաչիկեան, հոս Պետրոսն է. ինձմէ կախեալ եւ անկախ պատճառներով, երկար կ'ըլլայ բացատրելը, պիտի ... ը՛ր ... ուշանամ, բայց պիտի գամ». «չէ՞ որ զինուորագրուած ես» ... շարունակեցի խօսակցութիւնը ինքզինքիս հետ՝ արգարացնելով յանկարծակի փոփոխութիւնը որոշումիս.

բարակ ու պլպլան ձայն մը զիս ընդունած էր թեւին ետեւ, սիրալիւր ու ընկալող. սակայն կարծես վճռականութեան նման բամբ ու խիտ բան մըն ալ հասաւ ականջիս. կարծր լռութիւնը որ յաջորդած էր այս կարճ խօսակցութեան՝ հատու էր ու կիզիչ. խուլ ցաւ մը մխուեցաւ սրտիս մէջ. ծանօթ էր ինձի այս անսպասելի խոցը. ան կը կոչուի կռուի հրակէր. ասպարէզը կարդացուած էր. պէտք էր նետուէի կռուի դաշտ. երգ որսալու, երգ մուրալու, երգ հայցելու. երգ կ'որոնէի, հին ու կորսուած հայրենիքին չեղուած, թաղուած, խորտակուած երգերէն. տղմոտ, անդամահատուած թէ թրքախառն՝ պէտք էր որ զանոնք փրկէի վերջնական անէացումէ. եօթանասուն հնչուն ու շնչուն տարիներով խցուած ու խոցուած, ցեխոտ, մոռոտ, մռայլ, արիւնոտ, քանդուած ստորերկրեայ փապուղին որ կ'երկարէր Տէր-Ջօրէն մինչեւ Ալֆորվիլ՝ պիտի ուզէի որ յանկարճ ընծիւղէր, կանաչէին անոր մէլոտած անցքերը, լոյսի բարակ շառաւիղ մը նետահարէր խոնաւ պատերը, առուակ մը հոսէր հոս, ջաղաց մը բանէր հոն, եզ մը ակօսէր մուտք հողը, երազ մը ծլարձակէր տեղ մը, երգ մը վերջապէս շատրուանէր անկիւն մը, ըլլար խորհուրդը, նշանը, աւիւնը, աղօթքը, լաւան կամ թուքն ու քրտինքը այս տակաւ լուսաւորուող խարխլած ու անթափանցելի փապուղիին: Գիտէի որ եօթանասուն գոմէշներու տոկունութիւն, եօթանասուն իմաստուններու համբերութիւն եւ դեռ անչափելի աշխատանք հարկաւոր էին խօսեցնելու համար այդ անանցանելի փապուղիին բոլոր խոռոչներն ու քարքոսները, լպրծուն խոնաւութիւնն ու վիրաւոր քարերը՝ Տէր-Ջօրի «անանուխապատ» անապատէն մինչեւ Սէնի երկայնքին փռուած քօնֆէքսիոնի տենդոտ տուփերը:

* * *

Շարանթօնի կայանը բացարձակապէս ամայի էր այդ պահուն. վստահաբար մեթրոն նոր էր մեկնած. հետս կարդալիք ոչինչ ունիմ. կ'ատեմ դիրք կարդալ դնացքին մէջ սակայն բանով մը պէտք էր զբաղեցնէի միտքս. ինչո՞ւ ծառ, հող, անասուն, թռչուն, մըջիւն չեմ գտներ աջ ու ձախ քարափներուն վրայ. վեցերորդ դիժը բաղկացած է հողէն դուրս երկչոտ կամուրջներէ բայց ինչո՞ւ անիրաւը բնաւ կանգ չ'առներ հետաքրքրական տեղերը, այլ միայն՝ անուններով եւ ծանուցաթուղթերով խճողուած կայանները... որքա՞ն կը բաղձայի, հիմա, այս կոկիկ ու անիմաստ կիրճին մէջ հանգիսատեսը ըլլալ օձասանտրի մը հեղասահ յառաջխաղացին. Փրանսացիները զայն կ'անուանեն «սթօլփանտր»։ Ի՞նչ վայելչագեղ ու հանդիսաւոր յառաջանաց է այդ. ոչ թելանման շարժիչներուն համրանքը դիտես, ոչ ալ անոնց շարժելուն գաղտնիքին կրնաս թափանցել. ի՞նչ փոյթ, դիտէ՛ սա հեղաճեմ տողանցքը լուռ ու աստուածաչնչային. կարելի՞ է մտածել գեղար-

ւեստագիտական բարդ առեղծուածներուն՝ ի տես այս միջատին․ ի՞նչ անքակտելի բարդութիւններ պարզ ու բնական իրերայաջորդութեամբ կ'ընթանան․ Մոցարդի երաժշտութի՞ւնն է արդեօք որ պիտի նմանցնէի սա սրտառուչ թաւալումին, թէ մարդկային ուղեղի մանուածապատ անպարոյր շնչառութիւնը:

Յանկարծ տարօրինակօրէն մտաբերեցի որ ես հայ մըն եմ եւ անբացատրելիօրէն խորհեցայ որ օձասանտրային խորհրդածութիւնները խոտոր կը համեմատին այս իրողութեան հետ․ պէտք էր իսկոյն հայկական հարցերու վրայ կեդրոնանալ ու մտատանջուիլ առանց քոմբլէքսի․ այս անսպասելի շեղումը մտքիս՝ ինքնիրեն ծնունդ առաւ եւ մտածուեցաւ մէջս առանց դոյզն դիմադրութեան ու միջամտութեան իմ կողմէ․ մտածեցի՝ ինչո՞ւ չմտածել օրինակ հայ մամիկներուն վրայ: Ինչո՞ւ իմ ծերուկ հայրենակիցները կը մերժեն ինծի երգել առտուայ 9-էն 12 եւ երեկոյեան 6-էն ետք․ անկասկած որովհետեւ մտովին եօթնասուն տարի ետ վերադառնալու համար ցերեկուայ 9-էն 12-ը կարճ է, 6-էն ետքն ալ մութ է․ վերջապէս շատ ժամանակ չկայ եօթնասուն տարի ետ երթալու եւ անկէ կրկին Ալֆօրվիլ գալու համար, յարմարագոյն ժամանակը 2-էն 5-ու-կէսն է, թէյի կամ սուրճի՝ ատեն․ մարդ պէտք է ժամանակ ունենայ, ժամանակին մէջ շա՛տ հեռու երթալու համար․ այդպէս չէ՞ միթէ, փափկասուն տիկին Աղաւնի․․․ բնա՛ւ չկրցիր Մարգուանի ամերիկեան քօլէճի պատմութիւնը սկսիլ մինչեւ որ լաւ մը կէսօրէ ետք չեղաւ․ վերջապէս վստահ չեղար որ պէտք եղած ժամանակը ունիս ժամանակին մասին մտածելու ու անկէ վեր ու ետ մազլցելու: Առտուայ ժամը 9-ին դեռ չես գիտեր, թէ ի՞նչ գիտես․ ժամը 10-ին չես գիտեր թէ գիտե՞ս տակաւին ա՛յն ինչ որ գիտէիր ժամանակին․ ժամը 11-ին դեռ չես գիտեր թէ գիտցածիդ ո՞ր մասը ո՞ր չափով պիտի կարենաս վերյիշել: Կէսօրին՝ ճաշ — բարեբախտաբար շուտ կը մոռնաս այդ մէկը․— ժամը 5-ու-կէս ըլլալուն պէս՝ կը սկսիս անսպարել գիտցածներդ կամաց-կամաց մոռնալու: 2-էն 5-ու-կէս ի՞նչ լաւ երգեցիր, պատմեցիր, սպրեցար, լացիր, անիծեցիր, կատղեցար Թոփալ-Օսմանին դէմ, կզակդ դողդըղաց վերյիշելով Միսիս Կէյճը որ քսանեօթը հայ որբուհիներ ազատեց արիւնարբուին ձեռքէն, գաղտնի ուտելիք կը տանէր լեռները ասպատան գտած հայ փախստական յեղափոխականներուն եւ հոգին աւանդեց 1917-ին ատենները իբրեւ հետեանք չափազանց հալ ու մաշի: Սիրելիս․ այժմ թէյդ առ․ արձանագրուած է ամբողջ պատմութիւնդ․ 3-ու-կէս ժամուան ընթացքին ութսուն տարուայ լաւայ ու հրաբուխ ամբողջ անհաւատալի կեանքդ տեղափոխեցիր ժապաւէնիս վրայ, բան մը որ չէիր գիտեր որ պիտի կարենայիր ընել ժամը 1-ին, հիւսմ, կրկին թաղեցիր այդ անցեալդ մտքիդ քարանցաւներուն խորը,

երբ արդէն ընթրիքի ժամը կը մօտենայ յամրաքայլ եւ պէտք է որ սկսիմ գործիքը տեղաւորել իր պայուսակին մէջ:

* * *

Ժամը 5-ը անցած էր երբ դուռը զարկի ծաղիկեաններուն: Փոքրիկ անցքէ մը առաջնորդուեցայ խոշոր եւ լուսաւոր սրահ մը որուն պատերուն մերկութիւնը աւելի խօսուն էր քան այն աղմուկը որ կու գար ներսէն: Այո, պէտք էր նախատեսած ըլլայի, հետատեսիլն էր — նոյն ձայնաւոր խեղկատակութիւնները, միեւնոյն գունաւոր շողակրատութիւնը, նոյն խելայեղ ու կրքոտ, անհեթեթ վազքը գնդակի մը հտեւէն: Այդ յանկարծակիօրէն յայտնուող անիմաստ շարժա-ձայնական հոսանքէն պահ մը շէջմած՝ չկրցի դիմագրաւել ներկաներուն ինքնութիւնը: Անխուսափելիօրէն կրկին մեկնած էի եօթանասուն տարի առաջ, Վա՞ն, Ռօտօսթօ՞ թէ Ուրֆա, ուր տակաւին չկային հաճոյակատար այս մեքենաները, ոչ իսկ հոն ցուցադրուածները: Զմեռնային երկար գիշերները լամբի աղօտ լոյսով կը շարահիւսուէին հայրենի բանն ու խօսքը: Հայ հոգին ի բնէ օժտուած է գիրն ու բանը, խօսքն ու երգը պատմելու, գրելու, երգելու, պահպանելու, պաշտպանելու ու փոխանցելու անշէջ բնազդով: Ո՞ւր կարելի էր գտնել անպայմանօրէն ու պարտաւորաբար Աստուածաշունչը, երազահանը, երգարանն ու այբենարանը միաժամանակ, եթէ ոչ իւրաքանչիւր հայ խրճիթի մէջ: Մեր ընտանիքի հազար էջնոց երազահանը կը պարունակէր, լաւ կը յիշեմ, հազար ու մէկ տեսակի ընտանեկան խաղեր, շուտասելուկներ, առակներ, առածներ, հեքիաթներ, մեծ մարդոց մտածումներէն ու գրուածքներէն, հայկական հին դիցաբանութենէն պատմութիւններ աստղամուրակային դրուժեանց գիտելիքներ իրենց բացատրութիւններով, եւ դեռ ինչե՛ր: Հօրս Աստուածաշունչը կը պարփակէր, հին եւ նոր Կտակարաններուն միջեւ գետեղուած, բազմաթիւ անգիր թերթեր: Այդ էջերուն մէջ հայրս արձանագրած էր մասնաւոր խնամքով, իր ընտանիքէն ներս պատահող բոլոր ծնունդները, մահերը եւ ամուսնութիւնները. յստակօրէն կը տեսնեմ տակաւ տարբերուող մելանի գոյները եւ գրիչին ծայրերը. հօրս այդ կարճ տողերը, երկար տարիներու վրայ երկարաձգուած, ցոյց կու տային միաժամանակ զրենական առարկաներուն յարաճուն փոփոխութիւնները: Իսկ երգարաննե՞րը. կը խլուէին ձեռքէ ձեռք, միաձայն երգերը անմիջապէս կ'երկրորդաձայնուէին որեւէ առիթով եւ մատիկներու դոփիւնները կը թմբկահարուէին հանդիպակաց սեղանի մը ծայրը կամ հայելիի մը եզերքին: Երգերը եւ երգեցողական արտայայտութիւնները առաւելաբար տօնական օրերուն եւ մանաւանդ ամառ

եղանակին մէջտեղ կ'ելլէին. լուսնի ամառ գիշերները, գիւղը, մեր արահետէն կը յայտնուէին հայ երգեցիկ ընտանիքներու անդամները, որոնց զաւակները տարիներով երաժշտանոց յաճախած էին եւ երգընթերցանութեան շքանշաններու արժանացած. անոնք կը շարժուէին երգելով շիտակ լուսնին ուղղութեամբ, ուր որ ալ առաջնորդէր ան. անոնց կը միանային հետզհետէ ուրիշ երգեցիկ ընտանիքներ. մանտօլինը եւ ձեռնադաշնակը Մանուկեան ընտանիքին երիտասարդ անդամներուն մենաշնորհն էր, իսկ բազմաձայն երգելու բնատուր ձիրքը տրուած էր Դերձակեաններուն քանի որ անոնց զաւակները, աւելի տարեց քան մենք, Անդրանիկը, Ալիսը եւ Անայիսը, մաս կը կազմէին Կանաչեանի «Գուսան» երգչխումբին: Քոյրիկս մէկ հատիկ էր երգերը իրարու ետեւ յիշելու մէջ իրենց բառերով. ես յաճախ կ'ունակս լուսնին տուած կը քալէի, քանի որ ձեռքի շարժումներով երգիչ բազմութեան դեկը ստանձնած կ'ըլլայի. այդ շարժումները աւելորդ չէին երբ կարգը կու գար «Ով Մեծաքանչ»ին կամ «Շուշօ»ին. այս երգերուն երգեցողութիւնը անդորր ու լուսափայլ երկնքին տակ, վերացումի պահ մըն էր. մանտօլինը եւ միւս գործիքը մունջ կը դառնային եւ երկրորդ ու երրորդ ձայնով երգողները՝ աւելի ձայնեղ, սակայն թափօրին յառաջնադասքը բնաւ կանգ չէր առներ. միայն ժամանակն ու լիալուսինն էին որ կարծես կարճ պահեր կ'ունենային անցողակի լուռ ժպիտներու, որոնք կ'անցնէին արծաթահոս մեզմ գեփիւռին սօսափիւնը կաղամախիներու տերեւներուն մէջ:

Վերադարձայ ինքզինքիս երբ աներեւոյթ ձեռք մը մարած էր գունաւոր կաշաղակը: Խաչիկեան մանրակազմ էր ու նիհար, ոսկրոտ, բայց փայլատակող ու թափանցող աչքերուն մէջ անկարելի էր շնկատել զսպութիւնն ու խստութիւնը — վերագտայ այդ նոյն խիտ ու բամբ վճռականութիւնը զոր ինծի փոխանցած էր ընկալուէր մօտ մէկ ժամ առաջ: Իր հանդէպ մէջս ծայր տուած ու անող ակնածանքը ոչինչ ունէր անկենդան ու պաշտօնական, ընդհակառակը, իր զանկը բան մը ունէր սիրալիր եւ անոր տակ պայծառացող ժպիտը ոչ միայն բունազօսիկ չէր այլ գորովագութ, շնորհալի ու հայրական: Երկար վայրկեաններու կարիքը չեղաւ որպէսզի շարժումներս ու խօսքերս ազատաթուիչ թեւ առնէին. ես ինքս զարմանքի մէջ ինկայ երբ քանի մը վայրկեան ետք բոլորովին չէզոքացած դտայ ներսիդիս ամբարուած ձանձրոյթն ու ջղազրգուցիւնը: Շրջանակաձեւ սեղանին վրայ առատ էին պտուղի զանազան տեսակները ու տունը պատրաստուած կարկանդակ: Այդ օր Խաչիկեան երբեք չխօսեցաւ իր անձին շուրջ. պարզ էր. անհաւատալի էր թրուած իրեն որ այսպէս, անկոչաբար, կիրակի ցուրտ օր մը, յանկարծ մէկ անձանօթ կը յայտնուէր եւ իրմէ կը խնդրէր հայկական

Հին ու անծանօթ երգեր․ երա՞զ էր, ինչ․ Ի՞նչն էր դրդած այս տղան, որ ծանր գործիքը շալակած եկած էր զինքը գտնելու․ Ի՞նչ տարօրինակ ու անհաւատալի դիպուած էր սա։ Արարիչը լսած էր վերջապէս իր սրտի խօսքը․ Եօթանասուն տարի շարունակ երգած էր ան Վասպուրականի Հայոց Ձորի սա մի քանի երգերը․ անոնք շրջած էին իր արեան հետ իբրեւ հանապազօրեայ շնչառութիւն ու աղօթք, իբրեւ սուրբ նշխար արիւնաթաւալ իր հայրենիքին, զոր այլեւս երբեք պիտի չտեսնէր․ երգած էր ու լացեր, երգած էր ու երազեր, տիւ եւ դիշեր, Եօթանասուն տարի, պահած էր այդ մասունքները իր մտքին ու հոգիին խորը իբրեւ անշէջ հուր, ու մարմին տուած անոնց Եօթանասուն տարի, իբրեւ իր հոլթեան լոյսը, իբրեւ իր անձին անբաժան մէկ հիւլէն․ անձկազին փափաքած էր օր մը զանոնք յանձնել երիտասարդ նոր հասնող սերունդներուն․ Խնդրած էր երաժիշտներէ, հայցած էր անոնցմէ պաշտօնական նամակներով, որ բարի ըլլան գոնէ անգամ մը ուշադիր ունկնդրել այս քանի մը երգերը ու նօթագրել, բան մը ընել որ չհիճանան․ իր տարիքը կը յառաջանար․ կրնար օր մը յանկարծ ամէն ինչ վերջ գտնել․ կրնար յիշողութիւնը զինք դաւաճանել․ սա իր հոգիին հիւլէները Ի՞նչ պիտի ըլլային․ ու դեռ կ'երգէր ու կը սնուցանէր իր ողջ հոլթիւնը անոնցմով․ ուրախ էր որ դեռ չէր մոռցեր բայց մինչեւ ե՞րբ․․․ Նայեցաւ շեշտակի աչքերուս, ծանրօրէն ելաւ ոտքի, առաջնորդեց զիս ու գործիքս իր փոքրիկ սենեակը, գոցեց պարզօրէն դուռ ու պատուհան, դարակներուն մէկուն մէջէն դուրս քաշեց երկու ծալլուած թուղթ, աչք մը նետեց անոնց վրայ, փակեց աչքերը, որոշեց ձայնը ու, ոտքի, անշուղկ, քաշեց երկար շունչ մը, կեցաւ․ Երկվայրկեան մը ետք երիզներս իրենց ահօսներուն մէջ կը տանէին անմահութեան սարսուռները․-

Էս ցաւը որ սարերից տամ
սար կը հալուի ձիւնի անան
Էլ սիրտս ինչպէս դիմանայ
ա՛խ ի՞նչ անեմ եաման եաման

մատներովը նշան ըրաւ որ կեցնեմ գործիքը․ շունչը կարճ էր, պէտք էր յաճախ վերանորոգէր զայն․-

Էս ցաւը որ ծովերից տամ
ծով կը ցամքի քարի անան
Էլ սիրտս ինչպէս դիմանայ
ա՛խ ի՞նչ անեմ եաման եաման

կը թրթռայի ամբողջ մարմնովս թիթեռնիկի մը նման որ հազար մզոն թեւածեր էր եւ ահա ի վերջոյ գտած իր փնտռած հիւլթն ու ծուծը, աւելչն ու բուրմունքը․-

Մէկը մէջքիս դանակ զարկեց
ես նայեցի մարդ չերեւաց
ես էլ ուրիշ դուշման չունեմ
կամ բախտս է կամ էլ Աստուած

*Եօթնասունն անգամ անհաւատալի. անգերազանցելի՛ գեղեցկու-
թիւն:*

ՊԵՏՐՈՍ ԱԼԱԿԱՅՏՈՅԵԱՆ